**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 07-ը նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

**Հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը

**Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝** ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. «Դիավանտ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ 01.11.2019թ. ներկայացված ծանուցման արդյունքները քննարկելու մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. «Դիավանտ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ 01.11.2019թ. ներկայացված ծանուցման արդյունքները քննարկելու մասին**

---

1.1. Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **01.11.2019թ.** ներկայացված ծանուցմամբ **«Դիավանտ» ՍՊԸ-ի** կողմից ***/Ֆիբրոգաստրոսկոպ լույսի աղբյուրով/*** ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը չի շտկվել (որևէ փաստաթուղթ չի ներկայացվել), ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Դիավանտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Հանձնաժողովը որոշեց **«Դիավանտ» ՍՊԸ-ի** տվյալները, գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

1.2 **«Դիավանտ» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած և բավարար գնահատված մասնակցին՝ **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ -ին:**

1.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին** առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ -ի** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Մաղաքյան